

դառնանք նրանց դրուժները իհնչ ենք ուզում մենք: Կայ մի բան, որ մենք ուզում ենք, բայց թէ ինչ բան է դա, այդ մենք ոչ ոյժ ունենք: ոչ կարողութիւն հրապարակով յայտնելու: պարզելու: Վաղը, միւս օրը ուրիշ կողմերից մենք սար ու ձոր կընկնենք, անվերջ թափառումներէ ծանապարհը կընտրենք եւ սակայն չենք կարող բաց ճակատով ասել, թէ մենք մեզ տուած օրէնք ենք ուզում, մենք մեր հին արատներէն ենք պահպանում:

Անկարողութիւնը առաջացնում է տանջանքներ: Ուզում ես մարդավայել ապրել, ուզում ես լաւ լինել, ուզում ես առողջ եւ երկարա-կենցած լինել, բայց ինչ անես, որ չես կարողա-նում: Ահ, եթէ կարողանայիր... ինչքան լաւ կը լինէր...

Կանոնադրութիւն Ներսիսեան աղգային հոգեւոր դպրոցին Տփլիսայի: Նա իմ առջեւ է, այդ դիմելով Ո՛վ սպանեց նրան:

Մի ամբողջ մարտիրոսութիւն է դա, մեր ցաւազար, հիւսնող տանկարողութեան պատ-մութիւնն է դա...

Կարդացե՛ք այդ պատմութիւնը:

Լ.

ՆԱՄԱԿ ԱՍՏՐԱԽԱՆԻԾ

Յունիսի 14-ին

Օրվայ հետաքրքիր հարցն է մեզանում երկաթուղու խնդիրը, որ այս օրերս ստացաւ իր վերջական լուծումը: Դա կենսաբիւլ եւ մահվան խնդիր էր Աստուծանի համար: Տարվայ մէջ 5 ամիս կտրված լինել աշխարհից—ինչ առաջադիմութիւն, ինչ առեւտրի զարգացում կարելի էր սպասել այդպիսի թաղաքների: Եւ իսկապէս, չը նայելով իր բնական հարստութեան — ձկան, որով պարծենում է եւ չնչում է Աստուծանի, այդ քաղաքի տնտեսական դրութիւնը շատ ողորմելի է:

Քաղաքի հասկացող ինտելիգենտ մասը չէր կարող ուշադրութիւն չը դարձնել այդ բանի վրա, բայց նրան չէր աշողլում գլուխ բերել այդ գործը շարունակել 25 տարի 25 տարի կուել, թէ քաղաքին անհրաժեշտ է երկաթուղու ունե-նալ—ինքն ըստ ինքեան մի ապացոյց է, թէ որպիսի դժուարութիւնների են պատահում ցանկալի երեւոյթները ներկայ ժամանակնե-րում:

Վերջին տարիներս երկաթուղու խնդիրը սուր կերպարանք էր ընդունել եւ առաջ էր քաշել երկու կուսակցութիւններ, որոնցից մէ-կը աշխատում էր երկաթուղու գիծը անցկաց-նել Վոլգայի աջ կողմով եւ կապել նրան Ցա-րիցինի հետ, իսկ երկրորդ կուսակցութիւնը ջանք էր դնում երկաթուղին անցկացնել գետի ձախ կողմով եւ միացնել Ռուսաստանի ընդ-հանուր գծերի հետ: Այդ ինքն ըստ ինքեան աննշան խնդիրը միայն երեւոյթական է, սա-կայն Աստուծանի համար նա կազմում էր կենսաբիւլ եւ մահվան խնդիր:

Բանը նրանումն է, որ Աստուծանի գաղն-վում է Վոլգայի ձախ ափին, իսկ դրա դիմաց՝ աջ ափին գտնվում է մի աննշան գիւղ—Փօր-պօտ անունով: Զախակողմիականները երկիւղ էին կրում, որ երկաթուղին, եթէ անցնի աջ

կողմով եւ վերջնայ Փօրպօտում, այն ժամա-նակ քաղաքը կընկնի եւ գոցէ կանցնի աջ կողմը Փօրպօտ: Իսկ եթէ այդ մեծ չարիք չը համարենք, ինչպէս չէին համարում աշակող-մեանները, այն ժամանակ մէջտեղ է գալիս ուրիշ խնդիր: Զախ կողմումն են գտնվում նա-հանգի միլիոններ արդիւնք տուող աղի լճերը, մինչդեռ աջ կողմում ոչ մի արդիւնքբերու-թիւն չը կայ: Այդ մի թոյլ պատկեր է երկու կողմի առաւելութիւնների. կան եւ ուրիշ բազմաթիւ առաւելութիւններ ձախակողմիա-կանների կողմում, սակայն մենք չենք բերում, որովհետեւ սա մեզ չափ հետու կը տանէր:

Բաւական է ասել, որ երկու կողմերի գծերի առիթով վերջին տարիներս այնքան է գրվել, որ անագին հատորներ են գոյացել:

Արդարութիւնը, ինչ ասել կուզէ, ձախակող-միականներին էր պատկանում. այդ կուսակ-ցութեան պարագլուխն էր քաղաքային վար-չութիւնը իր ինտելիգենտ իրաւասունների մի-ստուար խմբով, որոնց թիւում էին եւ հայերը. հակառակ կողմը բաղկացած էր կաշտակերված պօմպազուրների սակաւթիւ կողմնակիցներից եւ տեղական վարձկան թերթերից մէկից, որը բռնելով պօմպազուրի կողմը՝ ձախակողմեան կուսակցութիւնը համարում էր հայոց կուսակ-ցութիւնն եւ սրանց վրէժն աշխատում էր փա-թաթել շահախորական նպատակներ: Զախա-կողմիականները չը վախեցան այդ դիրքաւոր-սուտ-սրտացաններից եւ ամեն կերպ դիմա-դրեցին աշակողմիականներին. նրանք ընտրե-ցին պատգամաւորներ, որոնց մէջ կային եւ հայեր, ուղարկեցին Պետերբուրգ. եւ այս օ-րերս այդ խնդիրը ստացաւ իր վերջնական լուծումը: Եւ յօդուտ ձախակողմիականներին:

Միևնորոշ կօմիտէտում վերջնականապէս վճռվում է երկաթուղու խնդիրը: Այսօր ներ-քին գործերի միևնորոշ ցուցված է հետա-գիր, որով յայտնվում է, թէ Թաքաւոր Կայսրը բարեհաճել է թոյլատրել առաջիկայ 1903 թ. գարնանը սկսել երկաթուղու շինութիւնը Վոլգայի ձախ կողմով: Գիծը կը գնայ մինչեւ Սարատով եւ այդ քաղաքի հետ կը կապվի կա-մուրջով, իսկ այստեղից յայտնի է, որ ձախա-պարհ է բացվում ամեն կողմ:

Այդպիսով Աստուծանի կենսաբիւլ խնդիրը լուծված կարելի է համարել: Ազգաբնակու-թեան տարիներով փայլալայտ ցանկութիւնը իրագործված է: Զախակողմեան երկաթուղին ազգաբնակութեան հասունացած ցանկութիւնն է, որովհետեւ Աստուծանի տարիներով անագին ներկութիւնն եւ վնասներ է կրել ձմեռվայ ա-միսները: Այժմ երկաթուղին զգալի կերպով կը բարձրացնէ ազգաբնակութեան տնտեսական դրութիւնը եւ կը դիւրացնէ նրա հաղոր-դակցութիւնը տարբեր բոլոր ամիսներում: Կազմած չը կայ, որ գծի հէնց առաջին բաց-ման օրից Աստուծանի ոտ կը դնէ ընդհանուր առաջադիմութեան ասպարէզի վրա եւ այդ իսկ օրվանից նրա վերածնութիւնը կարելի է համա-րել:

Մտում է այժմ, որ այդ խնդրի վրա առանձին ուշադրութիւն դարձնեն տեղական կապիտա-լիստները: Պէտք է նրանք թափ տան իրանց վրայի ափական անշարժութիւնը, եթէ որ չեն

ուզում տեղական արդիւնքբերութիւնը օտար կապիտալի գոհարեցութեան առարկայ դառնալ: Այդ խնդիրն այնքան կարեւոր է, որ դրանով պէտք է լուրջ կերպով զբաղվեն թէ այն ան-ձինք, որոնք օրին մօտ են համարում ազգա-բնակութեան բարեկեցութիւնը եւ չարիքները եւ թէ այն հիմնարկութիւնները, որոնք մի օր եւ է յարաբերութիւն ունեն այդ խնդրի հետ:

Յ. Սօրօվաճ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Բագու, յունիսի 10-ին

«Մշակի» № 129-ում, յունիսի 18-ին, Ալեք-սանդրօպօի հայոց հոգեւոր կառավարութեան քարտուղար պ. Ալեքսանդր Սանդրօպօ յայտա-րարում է, որ ինքը ձեռնարկել է թարգմանել պետական օրինագրքերի բոլոր հատորներից այն ամեն յօդուածները, որոնք վերաբերում են սօս կ հայ-լուսաւորական եկեղեցու տն-տեսական եւ վարչական մասերի կառավարու-թեանը, նոյնպէս եւ Պօթօէնիայի վերջին հրատարակութեան թարգմանութիւնը:

Աւելորդ չեմ համարում յայտնել ինչպէս պ. Սանդրօպօն, նոյնպէս եւ ուրիշներին, որ տա-կալին 1900 թվականում մի եւ նոյն յօդուածնե-րը թարգմանել եմ ես ինքս եւ ուղարկել ուր հարկն է՝ տղաքութեան համար իրաւունք ըս-տանալու: Բայց մինչեւ այժմ այդ իրաւունքը ստացած չեմ տպագրական գործերի դէպար-տամենից:

Իմ թարգմանութեան մէջ մտել են օրինադր-քերի եւ այն մասերն ու յօդուածները, որոնց մէջ հայ եկեղեցու եւ եկեղեցականների մասին թէեւ մի խօսք անգամ չը կայ, սակայն թէ հո-գեւոր եւ թէ մարմնաւոր ու զատաստանական տեսանկյունը եւ իշխանաւորները հէնց այդ ընդ-հանուր յօդուածների հիման վրա դատում եւ վճռում են հայ եկեղեցու եւ եկեղեցականու-թեան վերաբերեալ գործերը:

Վերջապէս ես ձեռնարկած էի թարգմանել նաեւ պատժական օրինագրքի որոշ մասերը, բայց որովհետեւ յիշեալ օրինագրքը չուտով մեծ փոփոխութիւնների պէտք է ենթարկվի, ուստի թարգմանութեանս այդ մասը ես առ այժմ դադարեցրի:

Այս հանգամանքը ես յայտնել եմ տպագրու-թեան համար արդէն պատրաստի թարգմանու-թեան առաջաբանում:

Ես, ի հարկէ, հակառակ չեմ պ. Սանդրօպօի թարգմանութեանը: Բայց կարծում եմ, որ մի եւ նոյն նիւթին երկու թարգմանութիւն նուե-րելը՝ աւելորդ է:

Եթէ պ. Սանդրօպօ յանձն կառնէ թարգմա-նել օրինադրքերի եւ այն ընդհանուր մասերն ու յօդուածները, առանց որոնց, իմ կարծիքով, իր աշխատանքը թերի կը մնայ, ես ուրախու-թեամբ տեղի կը տամ, եւ իմ թարգմանու-թիւնը չեմ տպագրի:

Եղիշէ աւագ քահանայ Գեղամեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Յունիսի 22-ին

Կարդալով «Մշակ» լրագրի մէջ Նիդաբէթ Միթիթարեանցի անել դրութեան մասին հա-ղորդումը, որով դարձնում էր բարեբար ան-ձանց ուշադրութիւնը այդ այրու վրա՝ ես ժո-ղովցի 16 թվարկի 50 կօպ. դրամական օժան-դակութիւն, որ եւ ներկայացնում եմ ձեզ միշ-ված կնոյթ յանձնելու Նուէրների ստացել եմ Գ. Մովսիսեանից, Ն. Աստուածատրեանից, Ա. Մովսիսեանից, Գ. Լալմազեանից, Զ. Շալա-

դէպի մի տուն, որի տափակ կտուրի վրա կա-տարվում էր մի նոր, սիրտ պատառոտող դրա-մա. կիսամերկ հայ կանանց հրեւով գցում էին հարեւան հրեհեմած յիսութեան մէջ եւ դա-հիճներ բարձր քրքում էին: Քիչ հեռու, մի տեղ, որ աղատ էր հրեհի բոցերից, ալեւոր բուրբ ծծկեր երկխաների գլուխները պատին է խփում եւ այդ սպանութիւնը նա կատա-րում է այնպէս սառնարիւն կերպով, այնպէս միտմեղմաբար, որ կարծես թէ մի հասարակ առօրեայ ծէս է կատարում: Ընկերակիցները օգնում են նրան, բերելով նոր մանուկներ, իսկ այս խղճուկները աղմկում են օղը ճիւղերով, կարծես բնազդով զգում են իրանց դառն վի-ճակը: Երեւում է մայրը, բայց նրա հեծեմաքը, լացը միայն մի առիթ էր դառնում, որ նրան էլ ապանում են երեսայի հետ:

Զեմ ուզում եմ համառաջ աչքերիդ, մտածում եմ՝ արեւօք երազ չէ սա, բայց համոզվում ես, որ դառն իրականութիւն է: Բայց արեւի բերդա-պահ զօրքի զինուորներին սարափ է պատում. ումանք երես են դարձնում, ումանք փախում են այդ տեսարանից, ումանք էլ կանչում են եւ գիթութիւն են խնդրում, կարծես նրանց աղա-ղակն ու աղաչանքը կարող են կանգնեցնել բարեբարներին:

—Սա արդէն ութերորդ երեւանն է,—կան-չում է մէկը զինուորների միջից,—տես, ահա իններորդը, ահա եւ տասներորդը, ահա, Տէր

մեանից, Ա. Ալիխանեանից, Ն. Խուզանդե-րեանից, Դամարեանից եւ Ս. Կիրակոսեանից մի մի թուրքի, Թանդոյան եկեղեցու երէցի-ից 5 թ. Ա. Թառայեանից 2 թուրքի եւ Ե. Խորոհո 50 կօպ:

Յովհաննէս քահ. Ամիրխանեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կարա-Մուրզայի աշխատութիւնների հրատա-րակութեան օգտին ստացանք Թիւաթի չափ մայրեկեղեցու երգեցիկ քառածայն խմբի 5 թուրքի, որ նախկին գումարի հետ միասին կազմում է 1116 թուրքի:

Թիֆլիսի քաղաքային ու պարտայի կողմից Թիֆլիսի նահանգապետին ներկայացրած հաշիւը երեւում է, որ 1901 թվականի ընթացքում Թիֆլիսի քաղաքային դրամարկը մտել են եկամուտներ ընդամենը 1,358,198 թուրքի, 30 կօպէկի, իսկ ծախք ունեցել է քաղաքը ընդ-ամենը 1,325,631 թուրքի 93 կօպէկ: Առ 13 յունիսի 1902 թվականի քաղաքը ունեցել է 789,177 թուրքի 60 կօպէկ դրամարկի 564,796 թ. 37 կ. ապառիկներ եւ 2,906,591 թ. 71 կօպ. պարտք:

Տեղական ռուս լրագրիչների անելով Տիգրէս անգլիական առեւտրական տունը, որ Պարսկա-տանի զանազան մասերում գրասենեակներ ու մեծ քանակութեամբ պարսկական գորգե-պատուէրներ տալու տեղական տնայնագոր-ներին, այժմ մտադրվել է նոյն տեսակ գրասե-նակներ բանալ եւ Անդրկովկասի գորգագոր-ծական շրջաններում: Այս նպատակով մօտ օրերումս Թիֆլիս եկաւ Միգլէրի առեւտրակա-տան ներկայացուցիչ Միլնէր՝ գորգագործու-թեան վերաբերեալ տեղեկութիւններ հաւաքելու համար: Միլնէր, ի միջի այլոց, դիմեց նաեւ կոլ-կասեան տնայնագործական կօմիտէտին, որից եւ ստացաւ շատ կարեւոր տեղեկութիւններ: Միլնէր առեւտրական տունը մտադր է պահել Անդր-կովկասում սեփական ինստրուկտորներ, քիւի-կոսներ, ներկարարներ եւ նկարիչներ կովկա-սեան հին գորգերի նկարները նորից գործածա-կան դարձնելու համար:

Թիֆլիսի բօտանիքական այգու ծառայողների համար հաստատված է նոր շտապ: Այգու դի-րեկտորը նոր շտապով պէտք է ստանալ 3,000 թուրքի տարեկան ոռճիկ, նրա օգնականը — 2,000 եւ տնտեսական մասի կառավարիչը 1,500 թուրքի:

Պետերբուրգի քաղաքային ընտրութիւնների հարցը, մայրաքաղաքի լրագրիչների անելով հետզհետէ պարզվում է: Ընտրութիւնները տեղի կունենան աշնանը, բայց, ինչպէս խօսում են տեղեկի շրջաններում, կընտրվեն ոչ դուռով ձայնաւորներ, այլ անդամներ քաղաքային խորհրդի, որ պիտի կազմէ քաղաքային վարչու-թեան օրգաններից մէկը միայն: Քաղաքային վարչութիւնը իր ամբողջութեամբ չի լինի ընտ-րողական—հասարակական մարմին, այլ վար-չական: Մտում է միայն չը պարզված մի հարց թէ քաղաքային խորհուրդը բանի անդամների Աստուած...

—Աստուած իմ, Տէր Աստուած... Ձեզ բա-րեւանութիւն, ախր այն ինչ են անում—առ-դակում է ծեր կօզակը եւ արտասուածքի խորը կաթիլը կանգ է առնում նրա սպիտակած լեզվի վրա—Եստ եմ կենսաբիւլ մէջ մահեր տեսել—չարունակում է նա դողդոջուն ձայնով—բայց այսպիսի բաներ չէ պատահել տեսել: Աս-տուած է վկայ, ձերք բարեմէնցութիւն, է պատահել է, անթիվածները Անթիլները հոգի չունեն, երեւի ընտանիք էլ չունեն, մի խօս-բով, դեւերի ցեղ են...

Արեւնայի տեսարանը գալարում է ռուս գի-նուորին. նրա սիրտը ետում է, նա ուզում է դուրս նետվել կուռլու թիւրքերի հետ, բայց ոյժը չափազանց փոքր է, նա բաւականութե-ն չի անի, մինչդեռ թիւրքերը անթիւ անհամար են, ծածկել են բոլոր լեռները, հայուես, մի մի գինուորին երեսուն թիւրք կը գաւ... Սպա-սիր, երբ եւ իցէ հալիւ կը սեանենք, թէ միայն մի քիչ ուժեղանանք:

Այս ամբողջ արեւահեղ կոտորածը ցնցում էր մեզ, ակաւառ աղանատներին, մինչեւ հո-գու խորքը եւ հարկադրում էր նայել թիւր-քերի վրա, ինչպէս գիշարել զազանների վրա՝ որոնք կորցրել էին կարեկցութեան ամեն մի զգացմունք դէպի բոլորովին անմեղ երեւո-ները:

(Կը շարունակվի)

Իշխանին ցոյց տրվեց հանդիսաւոր ընդունելութիւնը։

ՄՕՍԿՎԱ. Գիւղատնտեսական ընկերութիւնը հարց տուեց աշխուակաւորութիւն պարագայութիւններին, զեմաւորներ վարչութիւններին նախագահներին եւ գիւղատնտեսական ընկերութիւններին, թէ գիւղատնտեսական արդիւնաբերութեան որ ճիւղերը կարող են տալ ամենից աւելի լաւ հետեւանքներ։

ՎԱՐՇԱՎԱ. Այստեղի գիւղատնտեսական ութ ընկերութիւններ բանակցութիւններ են վարում մեքանիկներ եւ գործիչներ պարագայութիւններին կապան գործարարներին հետ, որպէս զի իրանց յանձնի երկրի մէջ նրանց արտադրութիւնները վաճառելու ներկայացուցչութիւնը՝ նաւատակ ունենալով դուրս բերել գերմանական ներկայացուցչներին «Варшавский Дневник» լրագրի ասելով, Վարշավայի չըջկայքում տշխատող 69 խոշոր պարտիզաններ եւ բանջարեղանայութիւն ընկերութիւն կազմեցին՝ վաճառելու իրանց արդիւնքները առանց միջնորդների դիմելու։

ՀԷԼՍԻՆԳՅՈՐՄ. Բացվեց բոխիկների չորրորդ հիւսիսային կոնգրեսը, ընկել են 13 չվեղացի, 8 նորվեգիացի, 5 զանազան եւ շատ ֆինն բոխիկներ։

ՄԵՎԱՍՏՈՂՈՒ. Որովհետեւ Կ. Պոլսի յայտարարված է անընդհատ ժամաւարտի կողմից շոգենաւորը ուղեւորվում են դէպի Թէօդոսիայի կարանտինը։

ԼՕՆԻՍԱ. Թագաւորը գիշերը լաւ անցկացրեց Թագաւորը աւելի հեշտութեամբ է փոխում դիրքը անկողնում։ Այսօրեակը լաւանում է։

22 յունիսի

ՊԵՏԵՐԲՈՒԴ. Յունիսի 21-ին «Зарница» զուսանաւով բարեհաճեց վերադառնալ Անգլիայից Նորին Կայսերական Բարձրութիւն Թագաւորանգրը—Յունիսի 21-ին Յարսկոն-Սեւլոյի պալատի հրապարակի վրա, ի ներկայութեան Թագաւոր Կայսրի եւ Թագուհու Կայսրուհու, տեղի ունեցաւ զօրահանգէս, որին մասնակցում էր Նորին Մեծութեան կիրաւորների զուգը. Նորին Բարձրութիւն Թագաւորանգրի անունը անց է կացրած այդ գնդի ցուցակներին մէջ։

ԲԱԳՈՒ. Սարունիում, Նորելի նաւթահանքերում, այրվեց մի վիշկա։

ՊԱՐԻԶ. Սենատը ընդունեց, 176 ձայների մեծամասնութեամբ 114-ի դէմ, երկամիայ ծառայութեան վերաբերեալ որինպիսի երկրորդ յօդուածը Յօդուածում ասված է, թէ զինուորական ծառայութիւնը պէտք է հաւասար լինի ամենքի համար, ոչ մի բացառութիւն չէ թոյլ տրվում, բացի նրանցից, որոնք ֆիզիքապէս պակասաւոր են։ Զինուորական ծառայութեան լիակատար ժամանակամիջոցը 25 տարի է։ Պատգամաւորների ժողովում Դէնիզ Կոչէն բողոք յայտնեց այն 135 ուսումնարանների փակման դէմ, որոնք պահվում էին կրօնական միաբանութիւնների միջոցով։ Կոմս յայտնեց, թէ կառավարութիւնը որոշել է կոտորել ամեն մի ընդդիմութիւն, նպաստել յեփոխութեան ոգու յաղթանակին եւ ապահովել քաղաքացիական հաւասարութեան գերազանց իրաւունքները։ Այժմեան դէկրետին կը հետեւեն եւ ուրիշները։ Պատգամաւորների ժողովը, 333 ձայների առաւելութեամբ 210-ի դէմ, ընդունեց հերթական գործերին անցնելու բանաձեւը՝ հաւանութիւն տալով կառավարութեան յայտարարութիւններին։

ԲԵՐԼԻՆ. Վերանվերադառնալ Լրագրին հաղորդում են Կ. Պոլսից, որ բոլգարական դիպլոմատիական գործակալը ներկայացրել է մի յայտագիր, որով պահանջվում է վերականգնել Սէրբէսի առեւտրական գործակալի զինադրոշմը։ հակառակ դէպքում նա լիազօրութիւն ունի կատարել յարաբերութիւնները Բ. Դրան հետ եւ հետանալ Կ. Պոլսից։

ՍՕՖԻԱ. Հասան ապստեղ Կազանի գիմնազիայի 24 աշակերտներ իրանց ուսուցիչների հետ Կայսրանում նրանց դիմաւորեցին տեղական գիմնազիայի աշակերտները եւ ուսուցիչները, ինչպէս նաեւ ուսանողները։ Հասարակութիւնը ողջունում էր նրանց։ Աշակերտները տեղաւորվեցին ընկեր-բօլշակների տներում։

ՊԵՏԵՐԲՈՒԴ. Յունիսի 22-ին «Черковныя Вѣдомости» լրագրում տպագրված է ամենահպատակ զեկուցումը, որի մէջ Ս. Սինոդը արկանում է առ ոտս Նորին Մեծութեան սրտաքին շնորհակալութեան զգացմունքներ նոր Բարձրագոյն շնորհի համար հոգեւորականութեան, որ ցոյց է տուած թեմաների սրբաշնորհ պաշտօնականներին եւ տիրացուներին՝ նրանց կենսաթոշակներին եւ օժանդակութիւններին վերաբերեալ կանոնադրութեան հր-

րատարակմամբ։ Յիշված զեկուցման վրա Թագաւոր Կայսրը բարեհաճեց մեկադրել։ «Համազված եմ, որ քիմական հոգեւորականութիւնը կրկնապատկւած եղանակով կը վարէ իր մօտակաւ ծառայութիւնը ճշմարիտ եփսոսեալանով»։

Կ. ՊՕԼԻՍ. Բոլգարական հրոսակային խմբի մնացած մասը Պատրիարք ջարդված է։

ՍՈՒԷՑ. Հէջմաից ստացված են խոսքաւորող տեղեկութիւններ։ Վալի Անիէ-Աշիւ-փախել է։ Մեղքնում առաջին անգամ փակված է մարգարէի սրբավայրը, որ առաջ բերեց սաստիկ վրդովմունք։ Կ. Պոլսից ստացված հրահանգի համաձայն՝ սրբավայրը նորից բացված է։ Տեղի ունեցած դէպքերի պատճառը անյայտ է։

ՊԱՐԻԶ. Դիւբայի նշանակված է Պեկինի ֆերանսական դեսպան։

Եմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆՔԱՐ
Հրատարակիչներ՝ ԲԱԳՈՒՆԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍՍԶԱԿ ՄԵԼԻՍ-ԱՎԱՍՏԱՆԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՅԻՍՏԱՆԻ ԴԵՊՔ

Որովհետեւ եկեղեցական միմիայնաւորութեան կապալը անցնում է ուրիշի ձեռք, ըստի կը ծախվին հատարակութեան՝ եկեղեցական մեղրամոմեր, հալկական կնիքով, մինչեւ յունիսի 30-ը, հետեւեալ գներով.—սպիտակ մոմերը, որոնց ֆունտը արժէ 1 ր. 25 կ., կը ծախվին 1 րուբլով, դեղին մոմերի ֆունտը 1 րուբլու տեղ—80 կոպէկով։ Վաճառումը տեղի կունենայ Նորայէնի եկեղեցուն կից խանութում, Վրդաբառնաւոր, տէլեֆոն № 836 1—3

ՄԱՍԿՈՎԱ

Պատու ունեւ ծանուցանելու յարգելի հասարակութեան, որ Կուկիայում, Արիստակովի զեղատան կարգում, յուլիսի 1-ից բաց եմ անում մաքուր եւ էստանդին ճաշարան։ Развѣ-
жаея ул., № 11.
1—3 Գասպար Տէր-Յովհաննէսեան

ԳՆԵՑԷՔ ՏՈՒՆ

Եթէ կամենում էք ստանալ 80% եւ որ կարող է բերել աւելի եւս Տունը գրաւ է դրված բանկում։ Ծանկացողները թող դիմեն Գանսօյ-կայա փողոց, Օսիպովի մօտային մագազինը։ հարցնել Զէլքէզովին 1—5

Բ Ժ Կ Ա Պ Ե Տ

ՄԱՆԱՍ ԶԱՄԱՐԲԷԳԵԱՆ

այս ամառ եւս ընդունում է հիւանդներին հանքային ջրերում (Պատիզօրակ)։ 7—8



ՆՈՐ ՄԻՋՈՑ

մաշերը բուժանելու եւ ամրացնելու համար, ոչնչացնելու է թեփուր Դուրս է եկել նաեւ բոլորովին Նոր միջոց

ՁՈՒԻ ԿԱԹԸ

Երեւմէն քնքշութիւն եւ սպիտակութիւն տալու համար, ոչնչացնելու է արեւի պատճառած սեւութիւնը, մուշերը, տալիս է կաշուին քնքշութիւն եւ սպիտակութիւն։ Այդ գները չափաւոր են. մեծ քրուակը, արկղիկի մէջ, 2 րուբլի, փոքրը—1 ր. 50 կ. Մաշվում են բոլոր պարֆիւմերական եւ զեղալուծական խանութներում։ Դիւրաւ որ պահեստը զանաւոր է Պետերբուրգում, Պոլսկինսն փողոց, տ. № 15, բընալարան № 22. պահեստի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում՝ Կովկասեան շէրաւան ապրանքների վաճառման ընկերութեան խանութում՝ Երեւանեան հրապարակ եւ նրա բաժանմունքում, Միքայէլեան փողոց եւ Բազումում. նաեւ Միքայէլեան կամուրջի վրա, Պոզովի եւ Արիստակովի զեղատաններում։ Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են անմիջապէս պատասխով։ 95—100

ԳՈՒՏՏԵՆԵՐԵՐԻ ԳՐԱԽԱՆՈՒԹՈՒՄ

Վաճառվում են հետեւեալ թատրոնական պիէսները՝

- ՓԱՌԵԱԿԷՍ, Նիսիա, վոդվիլ 1 արար. գ. 40 կ.
 - » «200,000», կատակերգութիւն 1 արար. գ. 30 կ.
 - » Բանաստեղծ, կատակերգ. 1 արար. գ. 25 կ.
 - » Գրականական երեկոյ, կատակերգութիւն 1 արար. 20 կ.
 - ԳՈՒԶԱՐԵԱՆ Գր., Մեղապարտ հրէյներ, դրամա 4 դործողութեամբ, գ. 30 կ.
 - » Մեղապարտ փարիսեցիներ, դրամատիկական անցքեր 5 պատկերով, գ. 20 կ.
 - ԳԻՇՄԻՇԵԱՆ Ա., Օրորդ Բերդեանց. կօմիդիա, գ. 50 կ.
 - ՄՕԼԻԷՐ, Բոնի ամուսնութիւն, թարգմանութ. Տ. Փաի. գ. 20 կ.
 - ԼԷՕՅԱՐԴԻԻ, Առ իտալիան, Ա. Պ. 70 կ.
 - ՄԱՆԱԽԱՆ Տ., Պատուանին մուրհակը, թատերգ. եօթ արար. գ. 50 կ.
 - » «Պոլիսպէրիալ», կատակ. երկու արար. թարգմ. Յ. Նաղարեանցի, գ. 40 կ.
 - ՊԱՏԿԱՆԵԱՆ Գ., Սանդուխտ, գ. 25 կ.
 - ՄՕԼԻԷՐ, Ակամայ բօխիկ, կատակերգութիւն 3 արար. գ. 50 կ.
 - » Ագահը, կատակերգ. 5 արար. գ. 50 կ.
 - ԴՕԴԷ, Խոշորագոյն, թարգմանութ. Նաւասարդեանի, գ. 50 կ.
 - ԷՕԴԷՆ ՍԻՐ, Գաղտնիք Պարիզում, թատերգ. 5 արար., թարգմանութիւն Տէտէանի, գ. 1 ր.
- Դիմել Թիֆլիս. Книжный магазинъ «ГУТЕНБЕРГЪ». Г. Галустану, Лорис-Меликовская ул. № 11.

Յրանիական Եղեմաւային Ընկերութիւն
«ՄԵՍՍԱԺԵՐԻ ՄԱՐԻՏԻՄ» — «MESSAGERIES MARITIMES».

1/14-ին յուլիսի մեկնելու է Բաթմաից, ցերեկվայ ժամը 11-ին, «Cambodge» շոգենաւոր հանդիպելով Նեօթոսիայի, Կ. Պոլսի, Դարգանէի, Զմիւռնիա, Պիւէ, Մարսէյ, Հաւր եւ Լօնդոն։

Ուղղակի հաղորդակցութեան տոմսակները մինչեւ Պարիզ, Նոյնպէս եւ մինչեւ Եմպուր (Չիւսաւանում), Վալիփոստի գնացողների համար, կարելի է ստանալ Թիֆլիսում պակաս ցրած գներով։

Ապրանքների եւ ծանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւնների համար դիմել ընկերութեան Թիֆլիսի գործակալ պ. Վ. Յակոբեանին, նախկին Արծրունու գալէէյում, № 1 գրասենեակը. հեռախոս № 608: Գրասենեակը բաց է 9—1 ժամը ցերեկվայ եւ 5—7-ը երկուցեան, բացի կիրակի օրերից։ 1—1

Այս տարվայ Սեպտեմբերից բացվում է Օդեսայում

ՄԱՍԿՈՎԱ

Ա. Տ. Ա. Մ. Ն. Ա. Բ. Ո. Յ. Ժ. Մ. Ա. Կ. Օ. Վ. Ի. Զ.

Դիմել տեղեկութիւնների համար.—Սաղօվայա փող. № 15-2—10

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

Ե Ր Կ Ո Ւ Ս Ե Ռ Ի Ս Ն Զ Ա Ն Յ Հ Ա Մ Ա Ր

ԳՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առեւտրական Կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առեւտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց եւ պատրաստել գործնական ծանապարհով հմուտ հաշուապահներ։ Առարողները ստանում են առ տեսութեամբ։ Աւանդելի առարկաները սրանք են՝ 1) Առեւտրական Տնտեսութիւն. 2) Առեւտրական թուարանութիւն. 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի եւ բանկային)։ 4) Թուարանութիւն համարիչի վրա. 5) Առեւտրական թղթակցութիւն. 6) Առեւտրական եւ մուրհակի կանոնադրութիւն եւ 7) Գնադրութիւն, վառ ձեւերի ուղղելը։ Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 16-ից։ Ընդունելութիւնը սեպտեմբերի 2-ից, ամենայն օր, առաւօտեան ժամը 10-ից մինչեւ 12-ը, եւ երեկոյեան 4-ից մինչեւ 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սօլալում, Այէքսանդր Փրիզօնովի տանը № 9, Սերգիեւկովայա եւ Լեւոնտափկայա փողոցների անկիւնում։ Ծրագիրը եւ կանոնները կարելի է ստանալ ձրիապէս կուրսեր հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացի դիմում են Թիֆլիս, Ս. Մ. Մանյուլանց։ (չ. կ.) 2—25

Նախարարական Ընկերութեան Վարչութիւնը յայտարարում է ի դիմութիւն պատգամներին, որ սոյն յունիսի 19-ից մինչ 28-ը ներփակված եւ յունիսի 29-ից մինչ յուլիսի ներփակված տուգանքով նշանակված է 50% վճար, այսինքն իւրաքանչիւր փային հիշարուրի վճարի ժամանակ պէտք է ներկայացնել բաժնետոմսերը։ (20, 26, 28, յուն. եւ 1, 5, տււ.) 2—5

Շ Ղ Թ Ա Յ

Թէեւ մտադիր էինք ՊԱՏԿԱՆԱԶԱՐԻ ԲՆԱՇԽԱՐՀԻԿ ԲԱՌԱՐԱՆԸ երկու առանձին հատորներով հրապարակ հանել, սակայն դիտելով որ այդ հատորները շատ ստուար պիտի լինին, որոշեցին երեք դիւրատար հատորներու վերածել զայն։ Իւրաքանչիւր հատոր չորս 800 էջ կամ աւելի բովանդակութեամբ եւ իւր 300 կամ աւելի պատկերներով զարդարուած։ Յուլիս ամսին լոյս կը տեսնէ հիշեցրողը պրակն որով կ'ամբողջանայ Առաջին հատորը՝ Ա. տառէն մինչեւ տառը։

Կը խնդրենք մեր այն բաժանորդներին, որոնք տակաւին չեն ընդունած չորրորդ պրակն մեզ հետ յատուկ հաշիւ չունին, բարեհաճին զրկելու բաժնեգրները, յայտնելով միանգամայն իրենց որոշ հասցէն։

Բացուած է Բառարանի Ներկրող հատորի բաժանորդագրութիւնն ու կ'ընդունինք նաեւ նոր բաժանորդներ։ Հատորի բաժնեգրին է 15 ֆրանկ։ Իւրաքանչիւր բաժանորդ կրնայ այդ գումարը մէկ անգամէն վճարել եւ պրակներ ընդունել լոյս տեսնելուն պէս եւ կամ երեքական ֆրանկ վճարելով ամէն անգամ երբ պրակ մը լոյս տեսնէ։

Նոր բաժանորդներու դամար, որոշեալ թիւով վերադին պիտի տալի Բառարանի Առաջին հատորը, Ներկրող հատորի տպագրութիւնն աւարտելէ վերջ եւ կամ գուցէ առաջ։

Եթէ միջոցները ներքին, միջոց ունենք Բառարանի համար յատուկ քարտէզներ պատրաստել զաղմագին եւ նուրբ վիմադրութեամբ։ այս քարտէզները միայն Բառարանի բաժանորդը պիտի տրուին, չնչին գումարի մը փոխանակութեամբ։

ՏԵՍՉՈՒԹԻՒՆ ՏՊԱԳՐԱՏԱՆ

Հասցէ՝ Imprimerie Arménienne St. Lazare VENISE (Italie).